## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 59-97

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ 2009 թվականի փետրվարի 20-ին ժամը 17:00-ին կայացած՝ «Նորավանք» ԳԿՀ-ի հոգաբարձուների խորհրդի նիստի

քաղ. Երևան

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Ս. Սեյրանյան | ՀՀ կրթության և գիտության նախարար |
| Հ. Հակոբյան | ՀՀ սփյուռքի նախարար |
| Մ. Թոփուզյան | ՀՀ Նախագահի խորհրդական |
| Կ. Կիրակոսյան | ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետ |
| Գ. Գագյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ |
| Ա. Կարապետյան | ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության պետ |
| Մ. Լալայան | ՀՅԿ-ի փոխնախագահ |
| Ս. Սիմոնյան | ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ |
| Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյան | Հայաստանյայց առաքելական եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ |
| Գ. Հարությունյան | «Նորավանք» ԳԿՀ-ի գործադիր տնօրեն |
| Ս. Սարուխանյան | «Նորավանք» ԳԿՀ-ի գործադիր տնօրենի տեղակալ |

---

1. «Նորավանք» ԳԿՀ-ի 2008 թվականի գործունեության տարեկան հաշվետվության մասին

(Գ. Հարությունյան, Տ. Սարգսյան)

Ընդունել ի գիտություն «Նորավանք» ԳԿՀ-ի գործադիր տնօրեն Գ. Հարությունյանի զեկուցումը՝ կապված «Նորավանք» ԳԿՀ-ի 2008 թվականի գործունեության տարեկան հաշվետվության հետ:

noravanq



2. «Նորավանք» ԳԿՀ-ի տեսլականի քննարկում

(Գ. Հարությունյան, Տ. Սարգսյան)

«Նորավանք» ԳԿՀ-ի գործադիր տնօրեն Գ. Հարությունյանին՝ ՀՀ կրթության և գիտության նախարար Ս. Սեյրանյանի առաջարկությանը համապատասխան կազմակերպել շնորհանդես տեսլականի մասին և շահագրգիռ անձանց հետ ևս մեկ անգամ քննարկել այն:

3. «Նորավանք» ԳԿՀ-ի 2009 թվականի բյուջեն հաստատելու մասին

(Գ. Հարությունյան, Տ. Սարգսյան)

«Նորավանք» ԳԿՀ-ի գործադիր տնօրեն Գ. Հարությունյանին՝

1) վերանայել «Նորավանք» ԳԿՀ-ի 2009 թվականի բյուջեն՝ պահպանելով նախորդ տարվա բյուջեի ծավալները.

2) ներկայացնել «Նորավանք» ԳԿՀ-ի խորհրդի կազմում փոփոխություններ կատարելու մասին համապատասխան որոշման նախագիծ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

noravanq